ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝ Տնօրենի՝ ժ/պ Ա.Բաղդասարյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Սյունիքի մարզի Քարաշենի Լ.Սարգսյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին _ դասարանի դասվար՝ Ա.Բալաչյան

2024 – 2025 ուս. Տարի

ԿՐԹԱ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) 2024-2025 ուս. տարում Քարաշենի Լ.Սարգսյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին դասարանում սովորում է 8/ութ/ աշակերտ՝ 4 /չորս/ աղջիկ, 4/չորս/ տղա:

Դասարանում կան և ունակ, և թույլ աշակերտներ: Աշակերտներ կան, որ ունեն խոսքի խնդիր, դժվար են արտաբերում բառերը:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնադաստիարակչական աշխատանքները բարձր հիմքերի վրա պահելու համար անհրաժեշտ է ծնողների հետ միասին աշակերտներին ապահովել դասագրքերով, գրենական պիտույքներով: Կատարել դասարանի ակտիվի ճիշտ ընտրություն, աշխատանքի ճիշտ բաժանում: Վերահսկել և օգնել աշխատանքները ճիշտ կատարել: Անհրաժեշտ է նախաձեռնել խրախուսական բազմաթիվ միջոցներ առաջադիմությունը բարձրացնելու նպատակով: Այդ աշխատանքները ճիշտ և արդյունավետ դարձնելու համար պետք է ճիշտ կոորդինացնել ուսուցիչների և ծնողների ուժերը:

3.Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր ճիշտ դաստիարակության համար անհրաժեշտ է օգտագործել Հայ եկեղեցու պատմություն և գրականության ընձեռած հնարավորությունները, ուսումնասիրել 10 –ը պատվիրանները, լայն բացատրական աշխատանք տանել աղանդների, հայ ժողովրդի պատմության մեջ եկեղեցու դերի վերաբերյալ: Կազմակերպել էքսկուրսիաներ՝ պատմամշակութային և հոգևոր արժեքներին ծանոթացնելու նպատակով:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

<<Մայրենիի>> դասագրքի միջոցով դաստիարակել շրջապատում գեղեցիկը, լավը տեսնելու և չարը դատապարտելու կարողություն: Դիտումների և էքսկուրսիաների ընթացքում դիտածը գեղեցիկ վերարտադրելու կարողություն մշակել երեխաների մեջ:

3.3 Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մեջ դասի ընթացքում պետք է դաստիարակել հայրենասիրություն, հայրենիքին նվիրվելու ձգտում:Սովորեցնել հայրենասիրական երգեր:Այցելել հուշարձան-կոթող ,մասնակցել զոհվածներին նվիրված ցերեկույթին :

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզկուլտուրայի դասերի միջոցով իրագործել ֆիզիկական դաստիարակության խնդիրները:Անցկացնել շարժախաղեր:Զրույցների միջոցով տալ այն գաղափարը,որ ֆիզկուլտուրան առողջություն է:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Հասնել այն բանին,որ աշակերտը հասկանա << Ով աշխատի,նա շատ կսովորի>> բառերի իմաստը:Աշխատանքի դասերին ձեռք բերած գիտելիքներով գործնական կյանքում կիրառելու համար լինել հետևողական:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Զրույց բնության դերի և նշանակության մասին ,Կարմիր գրքի և ոչնչացող բույսերի,կենդանիների մասին:Կազմակերպել էքսկուրսիա անտառում:Անցկացնել զրույց <<Պահպանեք անտառը>>թեմայով:

3.7 Դպրոց – ընտանիք կապը

Դպրոց-ընտանիք կապի ամուր լինելը շատ կարևոր է աշակերտի ուսումնադաստիարակչական աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար, որի համար անհրաժեշտ է հաճախ կազմակերպել ծնողական ժողովներ և այցեր ընտանիքներ:Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ:

ՈՒՍՈՒՄՆԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսում ն. շաբաթ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը /առաջին կիսամյակ - 14շաբաթ,2 օր/	Կատարողներ
1-ին շաբաթ	Գիտելիքի օր Դասագրքերի ապահովվածություն	Դասվար
2-րդ շաբաթ	Զրույց Ամառ	Դասվար
3-րդ շաբաթ	Զրույց նվիրված <<Անկախության օրվան >>	Դասվար
4-րդ շաբաթ	Զրույց Շրջապատի մաքրության պահպանություն	Դասվար
5-րդ շաբաթ	Միջոցառում նվիրված ուսուցչի օրվան	Դասվար
6-րդ շաբաթ	Ինչպես լինել լավ ընկեր	Դասվար
7-րդ շաբաթ	ՈՒմ կուզեի նմանվել	Դասվար
8-րդ շաբաթ	Արդյունավետ հաղորդակցում,վարժություն Ասեկոսեներ	Դասվար
9-րդ շաբաթ	Կոնֆլիկտների հաղթահարում,ՈՒրագ,թե սղոց	Դասվար
10-րդ շաբաթ	Բանակցություններ, Երրորդն ավելորդ չէ	Դասվար
11-րդ շաբաթ	Զրույց սիրված տոների մասին	Դասվար

12-րդ շաբաթ	Նախապատրաստվել ամանորյա միջոցառմանը	Դասվար
13-րդ շաբաթ	Ամանորյա միջոցառում	Դասվար
14-րդ շաբաթ	Կարգապահական հարցեր,միջանձնային հարաբերություն	Դասվար
	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը /երկրորդ կիսամյակ - 15 շաբաթ,2 օր/	
15-րդ շաբաթ	Փոքրիկ միջոցառում նվիրված բանակի օրվան	Դասվար
16-րդ շաբաթ	Զրույց Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության մասին	Դասվար
17-րդ շաբաթ	Վատ և լավ սովորություններ	Դասվար
18-րդ շաբաթ	Փոքրիկ միջոցառում նվիրված գիրք նվիրելու օրվան	Դասվար
19-րդ շաբաթ	Ի՞նչ են սովորեցնում հեքիաթները	Դասվար
20-րդ շաբաթ	Եթե ես հրաշագործ լինեի	Դասվար
21-րդ շաբաթ	Զրույց Գարուն	Դասվար

22-րդ շաբաթ	Մեր պարտականությունները	Դասվար
23-րդ շաբաթ	Միջոցառում նվիրված մայրերին	Դասվար
24-րդ շաբաթ	Եթե ես կարողանայի	Դասվար
25-րդ շաբաթ	Հարգանք մեծերի նկատմամբ	Դասվար
26-րդ շաբաթ	Մեր ծեսերն ու զրույցները	Դասվար
27-րդ շաբաթ	Նախապատրաստվել <Զատիկին>	Դասվար
28-րդ շաբաթ	Զրույց՝ <Մենք և բնությունը>	Դասվար
29-րդ շաբաթ	Ծառատունկ	Դասվար
30-րդ շաբաթ	Շրջակա միջավայր,Կյանքի ոստայնը	Դասվար